ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2014 թվականի թիվ 25 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով, հիմք ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թ. փետրվարի 10-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին> N 107- Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-3.3-3/ անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետից «շինարարություն և ճարտարապետություն, կամ /գեոդեզիա /երկրաբաշխություն/ և քարտեզագրություն մասնագիտությունների գծով» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2014թ. փետրվարի 21
ք.Իջևան